

ԳԻՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ.

ԱՂՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՂԵՌՆԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Նանրահայր է, որ յուրաքանչյուր ժողովրդի լավ ճանաչելու, նրա բնավորությունը, բարոյականությունը, հոգեբանությունն ու վարքագիծը ճիշտ հասկանալու համար նախ և առաջ պետք է ուսումնասիրել նրա էպոսը, քանզի գրական-գեղարվեստական ոչ մի ստեղծագործության մեջ այնպես խորքային ու լիարժեք չի դրսևորվում այս կամ այն ժողովրդի բնավորության ու բարոյականության ամբողջական նկարագիրը, որքան ազգային էպոսում: Ավելին, ցանկացած ժողովրդական էպոս նաև արվյալ ժողովրդի պատմության վստահելի աղբյուր է, որովհետև այնպեղ, թեև անուղղակի ու չհամակարգված ձևով, պարունակվում են հերաքրքիր պեղեկություններ ու փաստեր էպոսաստեղծ ժողովրդի պատմական անցյալի, նրա անցած ճանապարհի, ձեռքբերումների ու կորուստների, հաջողությունների ու անհաջողությունների, անգամ իսկ այնոց պարճառած ավերածությունների ու կոտորածների մասին: Ըստ այսմ, իրավամբ հարց է ծագում՝ մենք ճանաչո՞ւմ ենք մեր հարևան թուրքերին ու ազերիներին, որոնք ըստ էության սերում են նույն արմավից, և դա չեն թաքցնում նաև իրենք, քանզի հրապարակավ հայտարարում են թուրքական երկու ժողովրդի ու երկու պետության գոյության մասին: Ով կասի, որ, այո՛, ինքը լավ է ճանաչում թե՛ մեկին և թե՛ մյուսին, թող փաստի, որ կարդացել է նրանց ընդհանուր էպոսը¹, որը, ի դեպ, արարել հրապարակություններում հեղուկ է նրբերանգային որոշ արարելություններով. ևս իմ խոսքում այն կանվանեմ պարզապես «Քորքուծի գիրք», ինչպես ընդունված է մասնագիտական գրականության մեջ²:

Խոստովանում եմ, որ ես նույնպես մինչև վերջերս անընդհատ եմ եղել դրա գոյության մասին և հավանաբար այդպես էլ կշարունակեի անընդհատ մնալ, եթե պատահաբար ձեռքս չանցներ “Звездная гроздь. Фольклор и литературные памятники Азербайджана” (М., 2009) գիրքը, որը “Классика литератур СНГ” մարտնաշարով լույս է ընծայել “Художественная литература” հրապարակչությունը, իսկ հրապարակությունը հովանավորել է «ԱԴՆ մասնակից պետությունների հումանիտար համագործակցության միջպետական ֆոնդը»: Ժողովածուն կազմել է Ա. Մ. Բադիրովը, առաջաբանը գրել են Ադրբեջանի ԳԱԱ ակադեմիկոս Բ. Ա. Նաբիևը և նույն ակադեմիայի թղթակից անդամ Տ. Ա. Քերիմլին, իսկ մեկնությունները կազմել են Տ. Ա. Քերիմլին և Ա. Մ. Բադիրովը: Վերջապես, գրքի սկզբում գեղեղված է Ռուսաստանի Դաշնությունում Ադրբեջանի Նախ-

1 Տե՛ս “Книга моего деда Коркуда”. Огузский героический эпос. Перевод академика В. В. Бартольда, издание подготовили В. М. Жирмунский, А. Н. Кононов, М.-Л., 1962:

2 Տե՛ս անդ, էջ 131:

րապերության արտակարգ և լիազոր դեսպան, Ադրբեջանի ժողովրդական արքիսպ, պրոֆեսոր Փոլադ Բյուրյույօղլուի «Նայրենիքն սկսվում է մայրենի լեզվից»՝ ընթերցողին ուղղված համառոր խոսքը:

Ներկա հոդվածում հարկ չհամարելով անդրադառնալու այդ գրքում (սկսած ծանուցումից) Կրեդ գրած բազմաթիվ ու բազմապիսի աղաղակող սխալներին, անսրամանաբական ու հակաբանական պնդումներին, պարմական իրողությունները զիարկցաբար կամ անզիարկցաբար կեղծելու փաստերին, ուրիշ ժողովուրդների գրական արժեքները սեփականելու անսքող նկրտումներին և համանման այլ երևույթներին, այնուամենայնիվ մերկապարանոց հայտարարություններ արած չլինելու համար պարտքս եմ համարում ընթերցողի դասին ներկայացնել ընդամենը երկու օրինակ.

1. Գրքի ծանուցման մեջ վերը նշված էպոսի մասին ասված է, որ այն գրավոր Կրեդով հանդես է եկել մ. թ. է դարում («появившийся в письменном виде в VII веке н. э.»): Նույնը մի փոքր այլ ձևով կրկնում է նաև մեծարգո դեսպանը: Նա գրում է. «Այդ անախուն գլուխգործոցն առաջին անգամ պապիրուսի վրա գրավել է ավելի քան 1300 փարի առաջ» («Этот анонимный литературный шедевр впервые был переписан на папирусе более 1300 лет тому назад», с. 4): Մինչդեռ գրքի՝ «Նումանիզմի և գեղեցկության հազարամյա դպրոցը» առաջաբանի հեղինակները, որոնք, ինչպես ասվեց, Ադրբեջանի ԳԱԱ ակադեմիկոս ու ակադեմիայի թղթակից անդամ են, ինչպես նաև՝ նույն ակադեմիայի Նիզամու անվան գրականության ինստիտուտի փոփոխություն և փոխարկություն, ընդամենը մի քանի էջ հետո սեռով սպիտակի վրա գրում են, որ այն իրենց ժողովրդի «հնագույն բանահյուսական հուշարձանն է» («самым древним словесным памятником», էջ 16), որի բանավոր փառերակը ի հայտ է եկել մ. թ. է դարում («появление устного варианта... относится к VII веку н. э.», էջ 16): Խորապես շնորհակալ ենք մեծարգո զիարկականներին, որ ըստ էության մերժում են իրենց հայրենակիցների այն թյուր պնդումը, որ օղուգական էպոսը իբր գրի է առնվել մ. թ. է դարում: Նավելենք, սակայն, որ, իրավացիորեն մերժելով ուրիշների թույլ տված սխալը, իրենք նույնպես կատարում են սխալ պնդում, որ իբր խնդրո առարկա էպոսը բանավոր ձևով հանդես է եկել մ. թ. է դ.: Նրանք մոռանում են, որ իրենց էպոսում խոսվում է նաև մ. թ. ԺԵ դ. Կրեդի ունեցած պարմական իրադարձությունների մասին (օրինակ՝ Կոստանդնուպոլիսը, որ թուրքերը գրավել են 1453 թ., արդեն հիշարակվում է Սյամբուլ ձևով, իսկ Տրապիզոնի թագավորությունը, որ գրավվել է թուրքերի կողմից 1461 թ., դեռ գոյություն ունի նաև)՝ մի բան, որ երբեք չէր կարող լինել մ.թ. է դ. սրբեղծված բանավոր էպոսում: Իրականում, ինչպես վաղուց ցույց են տվել այդ էպոսի վաստակաշար հետազոտողները, այն բանավոր ձևով սկզբնավորվել է մ. թ. է դ., երբ օղուգ թուրքերը դեռևս բնակվում էին Միջին Ասիայում, իսկ վերջնականապես ձևավորվել է ԺԵ դ. երկրորդ կեսում, որից հետո (դժվար է ասել, թե սրբագապես երբ) այն գրի է առնվել ու պահպանվել մեկ ամբողջական և մեկ թերի օրինակով: Ահա թե ինչ է գրում օղուգական էպոսի քաջագիտակ մասնագետ Վ. Մ. Ժիրմունսկին. ««Բորբորի գիրքն» օղուգական ասացողների՝ ուզանների, էպիկական պարմությունների ու երգերի գրառումն ու գրավոր մշակումն է: Այդ պարմությունները կամ «բիլինաները», ինչպես դրանք

կոչում է Բարսուղը (“Огузнамэ”), սրելովել են Կարբեր ժամանակներում եւ Կարբեր ասացողների կողմից, մասամբ՝ Միջին Ասիայի Կարածքում եւ Սիդարիայի սրտին ավազանում (Թ-Շ դդ.), մասամբ՝ օղուգների նոր հանգրվանում՝ Անդրկովկասում եւ Փոքր Ասիայի հարեւան շրջաններում (ՇԱ-ՇԵ դդ.): Օղուգական Էպոսի միջինասիական շրջանին են վերաբերում Քորքութի եւ Սալոր-Ղազանի կնոջ՝ Բուրլա-խաթունի եւ Ուրուգ-բեկ որդու կերպարները, հավանաբար նրանց պեպր է միացնել նաեւ Ղարագյունին՝ Ղազանի եղբորը, որի մասին եղել են մեզ չհասած երգեր, եւ գուցե կարելի է նաեւ նրա որդի Ղարա-Բուդաղին: Առասպելական Սալոր-Ղազանի եւ «Քորքութի դարը», ինչպես գիտեր թուրքմենական ավանդույթից դեռեւս Աբուլղազին, Թ-Շ դդ. են, «մեր մարգարեից հետո երեք հարյուր տարի անց», որը թուրքմենական ժողովրդի կիսապատմական ավանդույթներում կապված է Կայի ցեղի օղուգական խաների անունների հետ»³:

2. Նույն ծանուցման մեջ ասվում է նաեւ, որ «բանահյուսական առաջին սրելծագործությունը», այդ թվում՝ բայաթիները, ենթադրաբար սրելծվել են դեռեւս մեր թվարկությունից առաջ (“Первые фольклорные образцы-баяты, лирические присказки – предположительно созданы до нашей эры”⁴): Նախ, ինչպես Կեսանը, ակադեմիական մեծարգո գիտնականները, օղուգական Էպոսը համարելով իրենց ժողովրդի հնագույն բանահյուսական հուշարձանը (“самым древним словесным памятником”), որը նրանց համոզմամբ, իբրեւ բանավոր ձևով սրելծվել է մ. թ. է. դ., դրանով իսկ նրանք փաստորեն իրավացիորեն բացառում են մ. թ. է. դարից առաջ աղբրեջանական բանահյուսական հուշարձանների գոյությունը: Այսպիսից հետեւում է, որ գրքում բերված ու չբերված բայաթիները նույնպես չեն կարող սրելծված լինել ոչ միայն մեր թվարկությունից առաջ, այլեւ նախքան մեր թվարկության է. դարը: Զուր փրամաբանական իմ այս եզրակացությունը լիովին հաստատվում է նաեւ գրքում ներկայացված բայաթիների բովանդակությամբ. երեսուներեք բայաթիների ընթերցումից պարզվում է, որ թեւեւ աղբրեջանական ժողովուրդը դեռեւս մեր թվարկությունից առաջ ունեցել է “родина” (Կեն բայաթի N 1, համարակարգում իմն է - Ն. Մ.), “край родной” (Կեն բայաթի N 3), “разоренная Отчизна” (Կեն բայաթի N 7), եւ “земля родная” (Կեն բայաթի N 9) հասկացությունները, բայց Աղբրեջանի հսկայածավալ Կարածքից բայաթիների անհայտ հեղինակներին հայտնի չի եղել եւ ոչ մի տեղանուն, մինչդեռ նրանց չափազանց թանկ ու սիրելի են եղել միայն ըստ էության ոչ աղբրեջանական երկու տեղանուն՝ Արաքս (Կեն բայաթի N 11) եւ Ղարաբաղ (Կեն բայաթի N 10, 15, 16): Քանի որ արդեն հիշատակված անտրացիայում ասվում է, որ գրքում տեղ են գտել «ժողովրդական սրելծագործության եւ բանասրելծական խոսքի վարպետների լավագույն նմուշները, որոնք կազմում են աղբրեջանական գրականության գագաթները», ուստի ընթերցողին դրանց մասին փոքր-ինչ պարկերացում տալու համար հարկ եմ համարում բերել բայաթիներից թեկուզ այս մեկը (N 16).

3 В. М. Жирмунский, Огузский героический эпос и “Книга Коркута” գրքում, էջ 256: Այստեղից այս գրքից մեջբերումներ կադրակնիս փողափակում էջերում եմ միայն “Книга Коркута” եւ էջը:

4 “Звездная гроздь”, фольклор и литературные памятники Азербайджана, М., 2010, аннотация.

И пешком, и на арбах,
На каяках, кораблях
Обошел, объездил землю,
Лучше нет, чем Карабах.

Դասվելով բայաթիների դասավորության հերթականությունից՝ ենթադրելի է, որ դրանք ներկայացված են ժամանակագրական սկզբունքով, իսկ դա նշանակում է, որ վերը բերված N 16 բայաթին ավելի վաղ է սրելոծվել, քան հաջորդ քսաներեք բայաթիները: Ի դեպ՝ այդ են հաստատում նաև խնդրո առարկա բայաթիում թվարկված փրանսպորտային միջոցները. դժվար չէ փեսնել, որ անանուն բայաթագրին անձանոթ են եղել ԺԹ-ԻԱ դդ. կյանքի կոչված փրանսպորտային այնպիսի միջոցներ, ինչպիսիք են գնացքը, ավտոմեքենան, օդանավը, ուղղաթիռը, արհեստական արբանյակները և այլն: Բոլոր դեպքերում մեկ բան սպույգ է, որ մեզինք դեռ շար դարեր առաջ աղբբեջանական ժողովրդի քաջարի գավակներից այս բայաթիի անանուն հեղինակը ուրքով, սայլերով, նավերով և կայակներով շրջել է ողջ աշխարհը և համոզվել, որ երկրագնդի վրա Ղարաբաղից ավելի լավ ոչ մի վայր չկա: Ընշարն ասած, որպես Աղբբեջանիին սահմանակից նախկին ՂՆՍՀՆ Լոյնմբերյանի շրջանի ծնունդ՝ ես դեռ մանկուց լավ ծանոթ եմ աղբբեջանական մարդարար ու ապրանքարար փրանսպորտային բոլոր փոխադրամիջոցներին, ուստի ուրքով, սայլերով ու նավերով անհայր բայաթագրի «թամամ աշխարհ» պտույր գալը հեշտությամբ հասկացա, բայց երկար ժամանակ ոչ մի կերպ չէի կարողանում պարկերացնել «կայակ» կոչված փոխադրամիջոցի գոնե արարաթին փեսքը: Այդ նպարակով նախ փորձեցի թերթել ռուսերեն հայրնի բառարանները (Վլ. Դալ, Դ. Ուշակով, Ս. Օժեգով), բայց դրանցում չգտնելով ինձ հերաքրքրող անձանոթ բառի բացարրությունը՝ մի պահ նույնիսկ հուսահարվեցի և թիչ էր մնում դադարեցնելի որոնումներս: Միպս եկավ «Փնարողը կգրնի» ժողովրդական հանրահայր ասացվածքը և վերսկսեցի թերթել նորանոր փեղեկարու գրքեր ու գրա որոնածս: Ահա թե ինչ է գրված մ.թ.ա. աղբբեջանցի անհայր բայաթագրի օգրագործած այդ փրանսպորտաձեղի մասին «Սովերական մեծ հանրագիարարանում».

«Каяк, ոչ մեծ նավակ, անցյալում լայնորեն փարածված Արկրիկայի շար ժողովուրդների մոյր (պահպանվել է կանադական և գրենլանդական էսկիմոսների մի մասի մոյր): Կայակի վանդակավոր կմախքը պարրասսվում է փայրից կամ ոսկորից և վրայից երեսապարվում ծովային կենդանիների կաշվով: Վերելի մասում թողնվում է բացվածք, որը գոյրիով ամրացվում է թիավարողի գոյրկարելի չորսբոլորը: Ղեկավարվում է թիակով կամ մեկ երկաթիակով: Կայակը գրեթե չաուգվող է և լավ հարմարեցված է ծովում շարժվելու համար»⁵: Եւ այսպես, ոչ միայն պարգեցի ինձ հերաքրքրող բառի իմաստը, այլև իմացա, որ սրանից դեռ շար դարեր առաջ աղբբեջանցի անհայր բայաթագրը Ղարաբաղի գեղեցկությունը հասկանալու համար սրիաված է եղել դեգերելու նույնիսկ Արկրիկայում, նավարկելու անգամ իսկ կայակով: Թեև պարգից էլ պարգ է այս և համանման մյուս բայաթիները գրքում գերեղելու նպարակը, այնուամենայնիվ ծագում են մի շարք

5 “Большая советская энциклопедия”, т. 11, М., 1973, с. 561-562.

հարցեր, որոնցից կցանկանայի բերել հետևյալները. 1) հետաքրքիր է իմանալ՝ արդյոք ադրբեջանցի անհայտ բնութախույզն ինքն էր պատրաստել իր օգտագործած կայակը, թե այն պատրաստի վերցրել էր Կանադայի կամ Գրենլանդիայի էսկիմոսներից: 2) Արդյոք Ադրբեջանը հայտ չի՞ ներկայացրել կայակով Արկտիկայում ճանապարհորդած անհայտ բայաթագրին Գինեսի ռեկորդների գրքում գրանցելու համար: Չէ՞ որ դա կարող է իրավաբանական ծանրակշիռ հիմք ծառայել օրերից մեկ օր Արկտիկային փորձեր կատարելու համար, ինչպես ներկայումս փորձում է փրանալ պարմական Պարսկաստանի ու Նայաստանի փարածքներին և մշակութային արժեքներին: 3) Ինչն է պարճառը, որ դարեր առաջ Արկտիկայում կայակով շրջագայող անհայտ ադրբեջանցին Ադրբեջանի նավթով, գազով ու հանքային այլ հանածոներով հարուստ փարածքից, այդ թվում՝ Կասպից ծովի չքնաղ ափերից և մյուս գեղատեսիլ վայրերից ոչ մեկն այնպես չի սիրել, որքան Ղարաբաղը: 4) Կարիք կա՞ր մեր օրերում Բաքվում սարքված այս անհաջող բայաթու համար բայաթու ժանրի ծագումը ժամանակի մեջ հասցնել մինչև մեր թվարկությունից առաջ, իսկ խեղճ բայաթագրին փարածության մեջ՝ մինչև Արկտիկա:

Ինչպես ասացի, ներկա դեպքում ինձ այս կարգի հարցերը չէ, որ հետաքրքրում են, այլ այն, թե ինչու մինչև օրս օղուզական էպոսը ոչ միայն չենք թարգմանել ու ծանոթացրել մեր ժողովրդին, այլևս նույնիսկ գաղափար չունենք նրա գոյության մասին՝ չհաշված առանձին մարդկանց, որոնց թիվը հազիվ թե գերազանցի մեկ տասնյակը: Ապացո՞յց, որքան փնտրեցի, հայապառ գրականության մեջ «Քորքութի գրքի» մասին գրա միայն Ալեքսանդր Սաֆարյանի՝ «Զիա Գյոբալփը» կրթության և դաստիարակության հիմնահարցերի մասին» հոդվածի ծանոթագրություններից մեկում հիմնականում այսքանը. «14. Քորքութ Աթա» կամ «Դեդեմ Բորքութ» (Kitab-ı Dedem Korkut alâlisân-ı Taife-i Oğuzan) էպոսում պարմվում է ինչպես հույների, հայերի ու վրացիների, այնպես էլ գերբնական արարածների դեմ մահմեդականությունն ընդունած օղուզական ցեղերի վարած պատերազմների ու ներքին բախումների մասին: Նավանաբար գրի է առնվել XIV դ. վերջից XVI դ. սկիզբն ընկած ժամանակաշրջանում: Դրեզդենում պահվող ձեռագիրն ամփոփում է 12 էպիկական պատում (ներսական դեսթան), վարիկանյանը՝ 6 պատում, որոնք հետաքրքիր տեղեկություններ են պարունակում օղուզների կրոնական հավատալիքների, հասարակական ու փոքրաստիկական կյանքի, պետական կառուցվածքի մասին: Թուրք գրականագետները կարևորում են Օրհան Շաիբ Գյոբալի (1973) ու Մուհարրեմ Էրզինի (1958-1963) աշխատասիրությամբ հրատարակությունները: Ռուս. հրապ. տե՛ս “Книга моего деда Коркута”, М.-Л., 1962 (с критич. статьями В. В. Бартольда, А. Ю. Якубовского и В. М. Жирмунского): Զիա Գյոբալփը էպոսին անդրադառնում է «Թյուրքականության հիմունքների» փարբեր հավաքածուներում թե՛ ազգային մշակույթի արմատների վերհանման, թե՛ համաօղուզականության (Oğuzculuk) պրոպագանդման նպատակներով»⁶:

Վստահ եմ, որ եթե վաղուց թարգմանած ու կարդացած լինեինք խնդրո առարկա

6 Ալեքսանդր Սաֆարյան, Զիա Գյոբալփը կրթության և դաստիարակության հիմնահարցերի մասին, «Արևելագիտական ժողովածու», հ. V, Եր., 2004, էջ 301 (օգտվելով պատեհ աղբյուրից՝ շնորհակալություն եմ հայտնում հեղինակին՝ այս մասին տեղեկացնելու համար):

Էպոսը, ապա շար ու շար բան այնպես չէր լինի, ինչպես եղել է: Բայց, ինչպես ընդունված է ասել, անցածն արդեն անցած է, մրաձենք ապագայի մասին, ուստի որքան ավելի շուր թարգմանենք ու ազգովի կարդանք, նախ՝ այնքան ավելի շուր կճանաչենք մեր հարեւաններին, իսկ ապա՝ այնքան ավելի ճիշտ կկառուցենք նրանց հետ մեր հարաբերությունները ինչպես միջակերական, այնպես էլ առօրեական ու կենցաղային մակարդակներում: Վերջապես, եթե հարկ լինի բացահայտելու նրանց պարմագլխական կեղծարարություններն ու քարոզչական գեղծարարությունները, ապա այդ գործում մեծ օգնություն կարող է ցույց տալ հենց իրենց Էպոսը, քանզի նրանում օղուգ թուրքերի պարմությունն ավելի ճշմարտամոտ է ներկայացված, քան ներկայիս թուրք մասնագետների աշխարհայնություններում: Այդ է պարզապես, որ վերջիններս փորձում են կեղծել ոչ միայն այլ ժողովուրդների՝ հայրկապես մեր պարմությունը, այլև հերին թվով սրբագրում, խմբագրում ու այսօրվա քաղաքականությանն են հարմարեցնում իրենց իսկ Էպոսը: Ասվածի ճշմարտացիության մեջ հեշտությամբ կարելի է համոզվել՝ թեև օղուգ հարեւանցի համեմատելով Էպոսի վերը նշված երկու հրապարակությունները (Մ.-Մ., 1962 և Մ., 2009):

Որ ցանկացած ժողովրդական Էպոսում չափից ավելի ուռճացվում ու գովաբանվում են սեփական հերոսի ֆիզիկական ուժն ու գեղեցկությունը, հոգևոր ու մարմնոր կարողությունները՝ վերագրելով նրան գերմարդկային ուժ ու գեղեցկություն, բացառիկ խելք ու հնարամտություն, ընդհակառակը, թշնամին կամ թշնամիները ներկայացվում են ֆիզիկապես թույլ ու ոչ գեղեցիկ, եթե չասենք թույլ ու անճոռնի, մարմնորապես անճար ու անօգնական, որոնց պարճառով միշտ ընկնում են ծիծաղելի վիճակի մեջ, այդ ամենը միանգամայն հասկանալի ու սովորական են Էպոսների համար: Այլապես էլ ինչ Էպոս, որ հայրենակիցների մեջ չի արթնացնելու հերոսության, քաջության, հպարտության և համանման այլ զգացումներ: Անշուշտ, այդ տեսակետից բացառություն չէ նաև օղուգական Էպոսը, և դա միանգամայն բնական է: Գաղտնիք չէ և այն, որ բոլոր Էպոսներում տրեղի են ունենում և՛ մարդասպանություն, և՛ արյան հեղում, բայց այդ ամենը արվում կամ ցուցադրվում է ռազմի դաշտում՝ հակադիր ուժերի անմիջական բախման ընթացքում: Մյուս բոլոր Էպոսների նման օղուգական Էպոսը նույնպես հարուստ է այդօրինակ իրողություններով: Սակայն մյուս բոլոր Էպոսներից տարբերվում է հայրկապես այն բանով, որ նրանում մարդկանց գլուխ կտրելն ու արյուն հեղելը կարարվում է ոչ միայն ռազմի դաշտում թշնամիների հետ բախման ընթացքում, այլև սովորական կենցաղային պայմաններում, այսինքն՝ մարդկանց գլուխ կտրելն ու արյուն հոսեցնելը դիվում են որպես տղա երեխայի հասունացման ու առնականացման չափանիշ, իսկ հասուն տղամարդու համար՝ քաջության, պարվի ու արժանապարտության պայման: Ըստ այդմ, նորածին տղաներին մինչև տասնվեց տարին լրանալն անուն չի տրվում, որպեսզի այդ ընթացքում պարզ դառնա, թե այդ տեսակետից նա ինչ կարողություններ կդրսևորի, իսկ հասուն տղամարդկանց հասարակական դիրքը, պարիվն ու հարգանքը որոշվում է նրանց կարած գլուխների և հեղած արյան քանակով: Դժվա՞ր է հավատալ, որնմն բերենք ասվածը հասարակող մի քանի օրինակ.

1. Էպոսի երրորդ գլխում կամ դեաթանում, որ վերնագրված է «Երգ Կան-Բուրի որ-

դի Բամսի Բեյրեկի մասին», պարմվում է, որ Բայ-Բուր բեկը երկար ժամանակ զավակ չէր ունենում, որի պարճառով խիստ մտաբանվում էր: Եւ ահա Բայանդուր խանի մոտ կազմակերպված հերթական խնջույքի ընթացքում բեկերը, նկատելով նրա հոգեկան ծանր ապրումները, որոշում են միասին աղոթել, որպեսզի Աստված նրան արու զավակ պարգևի: Բանն այն է, ասվում է էպոսում, որ «այն դարերում բեկերի օրհնանքը [ճշմարիտ] օրհնանք էր, նրանց անեծքը՝ անեծք, նրանց աղոթքները լսվում էին»⁷: Իսկապես Արարիչը լսում է նրանց աղոթքը, և Բեյրեկ բեկն ունենում է արու զավակ: Նասկանալի է, բեկն անհափ ուրախանում է, ուստի կանչում է իր վաճառականներին ու հանձնարարում գնալ հույների երկիր՝ իր որդու համար թանկարժեք նվերներ գնելու: Թեև վաճառականները վերադառնում են փասնվեց փարի հեպո, բայց Բեյրեկ բեկի որդին դեռ անուն չունեւ, որովհետեւ «Այդ դարում, կարողում ենք էպոսում, պարանուն անուն չէին փալիս, քանի դեռ նա չէր կորել գլուխներ, չէր հեղել արյուն»⁸ (այս և հետագա ընդգծումներն իմն են □ Ն. Մ.): Այնպես է պարահում, որ անանուն դուցազնը գնում է որսի և ճանապարհին հանդիպում է Սրամբուլից⁹ վերադարձող վաճառականներին, որոնք մագապուրծ էին եղել Օնիկ¹⁰ ամրոցից իրենց վրա հարձակված անհավաքներից: Տասնվեցամյա պարանին, իհարկե, կարողանում է մեկ-մեկակ հաղթել հինգհարյուրհոգանոց ավազակախմբին, եւ վերցնել վաճառականներից հափշտակված ապրանքները և վերադարձնել փերերին: Գալով փուն՝ որդին հորը լուր է փալիս վաճառականների վերադարձի մասին, բայց ոչինչ չի ասում իր քաջագործության մասին: Նայրը, սրանալով վաճառականների վերադարձի լուրը, հանձնարարում է շքեղ վրան պարահասրել և ճոխ պարահասրություն փեսնել՝ վաճառականներին պարշաճ ընդունելություն ցույց փալու համար: Այնուհետև որդուն նսրեցնում է իր աջ կողմում և սպասում վաճառականների գալուն: «Եկան վաճառականները, ասվում է դեսթանում, խոնարիվեցին, ողջունեցին, փեսան, որ այն քաջը, որ կորեց գլուխներ, հեղեց արյուն, նսրած է Բայ-Բուր բեկի աջ կողմում: Վաճառականները մոտեցան և համբուրեցին քաջի ձեռքը: Երբ նրանք այդպես վարվեցին, Բայ-Բուրը գայրացավ և ասաց վաճառականներին. «Անալեք, անալեքներից ծնվածներ, մի՞թե համբուրում են որդու ձեռքը, երբ ձեր առջև է հայրը»: Վաճառականների գարմացական հարցումին բեկը պարահասրում է. «Այո՛, սա իմ որդին է»: Նրանք ասացին. «Եթե այդպես է, ապա մի գայրացիր, խան իմ, որ սկզբից մեկը նրա ձեռքը համբուրեցինք, եթե քո որդին չլինեւ, ապա մեր ապրանքները կկորչեին Վրաստանում, և մենք բոլորս կհայրնվեինք գերության մեջ»: Բայ-Բուր բեկն ասում է. «Ասացեք, մի՞թե իմ որդին կորել է գլուխներ, հեղել է արյուն»: «Այո՛, նա կորեց գլուխներ, հեղեց արյուն, գեփին փապալեց մարդկանց», ասացին նրանք: «Եւ այսպես, արդյոք ժամանակը չէ՞ այս պարանուն անուն փալու»: «Այո՛, սուլթան իմ, ավելին է, քան ժամանակը»: Բայ-Բուրը կանչեց օղուգների մյուս բեկերին, հյուրասիրեց նրանց, եկավ իմ պապ Քորքուրը, պա-

7 «Книга Коркута», с. 32.

8 Անդ, էջ 33:

9 Այնհայր է, որ այս ամենը փեղի է ունենում 1453 թ. հետո, այսինքն՝ Կոստանդնուպոլիս քաղաքանունը Սրամբուլ դարձնելուց հետո:

10 Օնիկ ամրոցի համար ծանոթագրված է. «Крепость в округе Басин, в районе Эрзерума, в ИОВ от него», էջ 266:

տանտն քվեց անուն եւ ասաց. «Լսի՛ր խոսքս, Բայ-Բուր բեկ: Բարձրյալն Աստված քեզ քվեց որդի, թող եւս էլ պահպանի նրան: Թող եւս լինի մուսուլմանների պահապանը՝ կրելով ծանր դրոշ: Նա բարձրանալու է [մեր] առջեւ փռված ձյունածածկ սեւ սարը, թող Բարձրյալն Աստված թերթնացնի քո որդու վերելքը: Նա անցնելու է **արյամբ տաքացած գետերով**, թող Աստված հեշտացնի նրա անցումը: Նա մխրճվելու է անհավաքների խիստ ամբոխի մեջ, թող Ամենաբարձրյալն Աստված պարգևի քո որդուն հաջողություն: Դու կկոչես քո որդուն Բասամ, [այժմ] թող նրա անունը լինի Բամսի-Բեյրեկ՝ գորշ հովա-տակի տեր: Անուն նրան քվեցի ես, երկար կյանք թող նրան տա Աստված»: Օղուզների մյուս բեկերը բարձրացրին ձեռքերն ու աղոթեցին. «Թող այս անունը երջանկություն բերի այս քաջին,-ասացին նրանք»¹¹:

2. Էպոսի IV գլխում, որ կրում է «Երգ այն մասին, թե ինչպես Ղազան բեկի որդի Ուրուգ բեկը գերի վերցվեց» վերնագիրը, նկարագրվում է Ղազան բեկի կազմակերպած ճոխ խնջույքը, որին ներկա են հարազատներ, բարեկամներ եւ ուրիշներ: Ղարզ է՝ ամենից վեր բազմած է Ղազան բեկը, որն աջ ու ձախ հանձնարարություններ է տալիս, առաջադրելով նվերներ բաշխում եւ բարձր փրամադրությամբ կերտվում անում՝ մնալով բոլորի ուշադրության կենտրոնում: Նրա աջ կողմում նստած էր Ղարա Գյունե եղբայրը, ձախ կողմում՝ իր դաստիարակ Արուգ հորեղբայրը, իսկ դեմ դիմաց կանգնած էր Ուրուգ որդին՝ աղեղին հենված: Նանկարծ Ղազան բեկը շրջվում է դեպի աջ, նայում եղբորը եւ քրքջում, նայում է ձախ, տեսնում է հորեղբորը, հրճվում է ուրախությունից, բայց անհապաքը գցելով աղեղին կրթնած իր Ուրուգ որդուն՝ ձեռքը խփում է ձեռքին եւ սկսում հեկեկալ: Նուզվելով տեսածից՝ Ուրուգ որդին հանդիմանական տոնով դիմում է հորը եւ բացատրություն պահանջում այդ ամենի համար, նույնիսկ սպառնում, որ եթե չասի պատճառը, ապա ինքը ստիպված կլինի գնալու քրիստոնյա արիստոկրատի մոտ, փոխելու կրոնը եւ ամուսնանալու սեռացյա քրիստոնյա աղջկա հետ: Լսելով վրդովված որդու զայրալից խոսքը՝ Ղազան բեկն ստիպված տեղի է տալիս եւ բացատրում. «Նայեցի աջ, տեսա եղբորս՝ Ղարա Գյունեն, եւս **կտրել է գլուխներ, հեղել արյուն**, ստացել նվերներ, հասել փառքի: Նայեցի ձախ, տեսա իմ դաստիարակ Արուգին, եւս **կտրել է գլուխներ, հոսեցրել արյուն**, ստացել նվերներ, հասել փառքի: Երբ նայեցի առաջ, տեսա քեզ, տասնվեց տարի ապրել ես, կգա օրը, եւ կընկնեմ-կմահանամ, կմնաս դու. դու դեռ աղեղ չես լարել, նետեր չես արձակել, **արյուն չես թափել**, քաջ օղուզների մեջ պարգևներ չես ստացել: Վաղը կփոխվի ժամանակը, եւ կմեռնեմ, կմնաս դու, ավաղ, իմ թագը, իմ գանդը քեզ չեն տա. այդպես մտածելով՝ եւս հիշեցի իմ վերջի մասին, լացեցի»¹²: Ի պատասխան հոր ասածի, որդին հանդիմանական տոնով հարցնում է. «Ե՞րբ ես դու ինձ [վերցրել] քեզ հետ, տարել անհավաքների սահմանների մոտ, հարվածել սրով, **կտրել գլուխներ**»¹³, որպեսզի սովորեմ քեզնից»: Այս պատասխանը միանգամայն գոհացնում է հորը, որը խոստանում է իր հետ վերցնել որդուն եւ անմիջապես արշավի դուրս գալ, հասնել այն տեղը, որտեղ

11 “Книга Коркута”, с. 34.

12 Տե՛ս անդ., էջ 49-50:

13 Տե՛ս անդ., էջ 50:

«արձակել է ներքեր, հարվածել սրով, **կտրել գլուխներ**»¹⁴: Հարկավ, Ղազան բեկը կապարում է իր խոսքումը. Ուրուգ որդու հետ արշավում է դեպի Ախալցխա, սկզբում կրում անհաջողություն, բայց հետո օգնության հասած բեկերի հետ միասին բռնվում է մարտի ու քանդում հաղթանակ: Ներկա դեպքում հարկ չեմ համարում կանգ առնել մանրամասների վրա, թեև ասելու բան չափ կա:

3. Էպոսի X դասարանը կոչվում է «Երգ Ուզուն-Ղոջայի որդի Սեկրեկի մասին»: Այսպես պարմվում է, որ օղուզների դարում եղել է Ուզուն Ղոջա անունով մեկը, որն ունեցել է ընդամենը երկու որդի, որոնցից ավագը, որի անունն էր Էկրեկ, մի քաջ ու բարի քաղամարդ էր, որը Բայանդուր խանի դիվան¹⁵ մտնում էր առանց արգելքի, երբ ցանկանար: Ավելին, ներս մտնելուն պես, քրոքելով մյուս բեկերին, գնում նստում էր ուղիղ Ղազան բեկի առջև՝ ուշադրություն չդարձնելով ոչ մեկի վրա: Մեկ օր էլ, երբ նորից քրոքելով մյուս բեկերին, նստում է իր ուզած տեղում, օղուզների մեջ աչքի ընկած օխիթներից մեկը, որի անունն էր Թերս-Ուզամիշ, Էկրեկին ասում է. «Ասի՛ր, Ուզուն Ղոջայի քաղա՛, այսպես նստած բեկերից ամեն մեկն իր տեղը վաստակել է սրի հարվածով, հաց բաժանելով, իսկ դու արդյոք **կտրե՛լ ես գլուխներ, թափե՛լ ես արյուն**, կերակրե՛լ ես քաղցածին, հագցրե՛լ ես մերկին»¹⁶: Էկրեկը պատասխանում է. «Ասա՛, Թերս-Ուզամիշ, մի՞թե **գլուխներ կտրելը, արյուն թափելը** քաջություն է»¹⁷: «Այո՛, քաջություն է», - հնչում է Թերս-Ուզամիշի կտրուկ պատասխանը: Ազդվելով այս պատասխանից՝ Էկրեկը ոտքի է կանգնում եւ խնդրում Ղազան բեկին, որ իրեն զինվորներ քա ասպատակություն կատարելու համար: Ղազանն, իհարկե, կատարում է նրա խնդրանքը, ոտքի հրամայում է իր զինվորներին միանալ Էկրեկի խմբին: Էկրեկի հավաքագրած ասպատակախմբի անդամները՝ թվով երեք հարյուր հոգի, հինգ օր շարունակ ուրում ու խմում են սեղանադարձ, ապա հարձակվում Շերյուգյուզից¹⁸ Գեկչե-Դենիզի¹⁹ ժողովրդի վրա, վերցնում մեծ ավար: Շարունակելով ավարառությունը՝ Ալինջա²⁰ ամրոցում ավազակախումբը գլխովին ջախջախվում է, իսկ Էկրեկը գերի է ընկնում ու ներվում բանր: Անցնում են քառիներ, մեծանում է կրքերը եղբայր Սեկրեկը եւ պարսկահայերեն խմանում, որ ինքն ունի ավագ եղբայր, որը վաղուց ի վեր բանարարկված է Ալինջա ամրոցում: Հասկանալի է, որոշում է՝ ինչ գնով լինի, անպայման պետք է եղբորն ազատագրի գերությունից: Գիշերով ընկնելով ճանապարհ՝ երեք գիշեր ու ցերեկ անընդհար ձիարշավում է, որպեսզի հասնի Ալինջա

14 Տե՛ս անդ:

15 Ըստ քառասուրբ «Ռուս-հայերեն բառարանի»՝ ի թիվս այլ իմաստների նշանակում է նաեւ «Հին Թուրքիայում տուրքանի կից բարձրագույն պետական պաշտոնյաների խորհուրդ» (Խ. Ի. Եր., 195): Փաստորեն, օղուզների մոտ այն գոյություն է ունեցել նաեւ բեկերի եւ խաների ժամանակ:

16 “Книга Коркута”, с. 89.

17 Տե՛ս անդ:

18 Ծանոթագրություններում այս տեղանվան կապակցությամբ գրված է՝ «Շարուր (Նախիջևանի ԻՍՄՏ)», էջ 277:

19 Վ. Վ. Բարսեղյանը ծանոթագրել է՝ «Գյուլջա լիճ», իսկ գիրքը կազմողները հավելել են՝ «ներկայումս՝ Մեանա լիճ», էջ 277:

20 Այս կապակցությամբ ծանոթագրություններում կարդում ենք. «Հավանաբար նույն անունն է, ինչ Ալինջակը (ամրոց Նախիջևանի մոտ)», էջ 277: Կասկածից վեր է, որ խոսքը վերաբերում է Երևանի անառիկ ամրոցին:

ամբողջ: Ընդ որում՝ նրա ճանապարհին անցնում էր Շամ հովտի կողքով, որը, համաձայն ծանոթագրության, գտնվում է «Նախիջևանի և Զուղայի միջև» (էջ 277): Թե ինչպես է Սեկրեկը կարողանում գերությունից ազատել եղբորը, ներկա դեպքում այնքան էլ կարևոր չէ, այլ ուշագրավ է հարկապես այն հանգամանքը, որ ամբողջ էպոսում մեն-մխակ անգամ էկրեկը փորձում է հակադրվել «գլուխներ կտրելն ու արյուն հոսեցնելը» քաջություն համարող օղուզական բարոյականությանը, բայց, լսելով Թերս-Ուզամիշի առարկություն չընդունող պարասխանն ու պեսնելով մյուս ներկաների հանդիմանական հայացքները, անմիջապես պեղի է պալիս և որոշում զբաղվել ասպարակությամբ, որն, անշուշտ, ենթադրում էր նաև գլուխներ կտրելու և արյուն հոսեցնելու գործողություններ: Ուշագրավ է նաև այն պարագան, որ թեև էկրեկի ասպարակությունները պեղի են ունենում Նայասպանի փարածքում, ի մասնավորի պարմական Գողթն գավառում, բայց օղուզական բնակավայրերը նրանից այնքան հեռու են, որ եղբորն օգնության աճապարող Սեկրեկն սրիաված էր երեք գիշեր ու ցերեկ անընդմեջ ձիարշավել: Փաստորեն, համաձայն օղուզական էպոսի, օղուզ թուրքերը ներկայիս Նախիջևանի ինքնավար հանրապետության փարածք մուտք են գործել անհամեմատ ավելի ուշ: Ներկաբար անհիմն են մեթոդյա բոլոր բարբաջանքներն այն մասին, թե Նախիջևանն ի սկզբանե պարկանել է օղուզ թուրքերին: Այս կապակցությամբ միանգամայն պեղին է հիշել 2010 թ. դեկտեմբերին Աստանայում կայացած ԵԱՀԿ գագաթաժողովում Նայասպանի Նանթապետության նախագահ Սերժ Սարգսյանի հեջեցրած այն միտքը, որ Ադրբեյջանը մի կողմից նույնիսկ ՅՈՒՆԵՍԿՈ-ում փորձում է վիճարկել հայկական քրիստոնեական արվեստի գլուխգործոց խաչքարերի հեղինակային պարկանելության հարցը՝ պնդելով, որ հայկական ու հայապառ խաչքարերն իբր ադրբեյջանական արվեստի նմուշներ են, իսկ մյուս կողմից՝ ընդամենը հինգ փարի առաջ Զուղայում վայրագաբար ոչնչացրեց գերեզմանադառն հազարավոր խաչքարերը և նույն պեղում կառուցեց ռազմական հրաձգարան:

Ծիշարն ասած, երկար ժամանակ նման վարքագիծն ինձ թվում էր փարօրինակ ու զարմանալի, բայց, ընթերցելով օղուզական էպոսը, հասկացա, որ փարօրինակ ոչինչ չկա, որովհետև էպոսի սկզբից մինչև վերջ միավար հնչում է նվաճված վայրերում քրիստոնեական եկեղեցիները քանդելու և դրանց պեղում մզկիթ կառուցելու գաղափարը: Նավարացած եմ, որ դժվար է գրել աշխարհում մեկ ուրիշ էպոս, որպեղ քանդելու, ավերելու, արյունասիրության ու արյունոշտության մոլուցքն այնպիսի չափերի հասնի, ինչպիսին պեսնում ենք օղուզական էպոսում: Դրանում համոզվելու համար բավական է թեկուզ հարեանցիորեն համեմատել այն միջինասիական ժողովրդական էպոսների և հարկապես ուզեկական «Ալիամիշ» էպոսի հետ: Ես հարուկ շեշտում եմ հենց ուզեկականը, որովհետև մասնագիտական գրականության մեջ վաղուց փրապելում է այն պեսակները, որ այդ երկու էպոսների միջև գոյություն ունի բովանդակային ակնհայտ ընդհանրություն, իսկ առանձին դեպքերում նույնն են նույնիսկ հերոսների անունները²¹:

21 Այդ մասին մանրամասն փն . . . , նշվ. աշխ., էջ 214, նաև՝ **Тыра Мирзаев**. Бесмертный памятник узбекского героического эпоса, в кн.: “Алпамыш”, узбекский народный эпос. Перевод Л. М. Пеньковского, вступительная статья, подготовка текста и примечания Т. М. Мирзаева, Ленинград, 1982, էջ 8:

Այդուհանդերձ, դրանք անհամեմատելի են իրենց գաղափարաբանությամբ ու բարոյափիլիսոփայությամբ:

Այո՛, կարդալով օղուզական էպոսը՝ միանգամայն հասկանալի ու բացաբերելի են դառնում թե՛ 1915 թ. Նայոց Մեծ եղեռնը, թե՛ 1920 թ. Շուշիի հայերի կոտորածը, թե՛ Սում-գայիթում եւ Մարաղայում բոլորովին վերջերս Կոտայի ունեցած հայոց սպանողը, թե՛ քնած հայ սպա Գուրգեն Մարգարյանի գազանային կացնաւարությունը, թե՛ Զուղայի հայկական խաչքարերի վայրագաբար ոչնչացումը Ադրբեջանի նախագահի անմիջական ղեկավարությամբ եւ թե՛ մարդասպաններին հերոսացնելու թուրք-ազերիական մերօրյա փեսական եւ գործնական մրաձեւակերպն ու գործելակերպը, որովհետեւ այդ են սովորել ու սովորում իրենց էպոսից:

Ն. Ղ. ՄԻՐԶՈՅԱՆ

Փիլիսոփայական գիւր. դոկտոր